ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/149

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Լյուսաշ» ՍՊԸ-ի տնօրեն և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Գասպարյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական N 01Ա042256, լիազորագիր, տրված 09.09.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.09.2019թ. թիվ 26/26-1/14672-2019 գրությամբ «Լյուսաշ» և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 02.09.2019թ. թիվ 02/16.4/5128-2019 գրության հիման վրա, 03.09.2019թ. թիվ 26/26-1/14672-2019

գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Լյուսաշ» և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊ ընկերություններին (հետայսու նաև՝ ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Լյուսաշ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Լյուսաշ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպված «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/14» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արդյունքների ուղարկված արձանագրության մեջ նշված էր ներկայացված հայտում հայտնաբերված անհամապատասխանությունները շտկելու մասին՝ «ավելացնել մի տեղ բաց թողնված Արմեն Գրիգորյանի հայրանունը, ուղղել աշխատողների թիվը և լրացնել պահանջվող լիցենզիաների ներդիրները»:

Ընկերությունը հեռախոսով կապ են հաստատել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գրասենյակի աշխատակիցների հետ խնդրի պարզաբանման համար և հայտնեց, որ լիցենզիան իր բոլոր ներդիրներով հայտում ներկայացված է, սակայն ստացվել է բացասական պատասխան այն մասին, որ ներկայացրած «Լյուսաշ» ՍՊԸ-ի լիցենզիանները չեն գործում, իսկ «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ի լիցենզիաների ներդիրները պակաս են պահանջվող ներդիրների ցանկից:

Ըստ հայտում ներկայացրած կոնսորցիումի պայմանագրի, նշված նախագծային աշխատանքների բաշխման «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ն պետք է կատարի նախագծերի էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցերի մասը, որի համար ներկայացվել էր լիցենզիա իր ներդիրով:

Այդ պատճառով «Լյուսաշ» ՍՊԸ-ի կողմից նիստի չներկայացվեց պահանջվող շտկումները:

Ընկերությունները գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել հաշվի առնելով 2019թ. հունիսի 19-ին ընդունված ՀՀ օրենքը «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»:

Ընկերությունը խնդրել է հաշվի առնել գրությամբ ներկայացված բացատրությունը. «Լյուսաշ» և «ԱՐՄԵՆ. ԷԼ. ԷՆԳ» ՍՊ ընկերություններին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Լյուսաշ» և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊ ընկերությունները, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/149 ընթացակարգի շրջանակներում 09.09.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել են իրենց ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.09.2019թ. թիվ 02/16.4/5128-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2019 թվականի օգոստոսի 13-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/14» ծածկագրով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Լյուսաշ» և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը (հետայսու՝ Կոնսորցիում): ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ Կոնսորցիումին ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանություն-ները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Կոնսորցիումի և Ընկերության հայտերը մերժվել են՝ արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու հիմքով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/149 ընթացակարգի շրջանակներում 09.09.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/149 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/149 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լյուսաշ» և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2019թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ Կոնսորցիումի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ:

Կոնսորցիումը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Կոնսորցիումի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի շտկվել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.09.2019թ. թիվ 26/26-1/14672-2019 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 02.09.2019թ. թիվ 02/16.4/5128-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ

և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը:

Կարգի նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում

չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով պահանջվել է հետևյալ լիցենզիան.

ԼԻՑԵՆԶԻԱ
Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐ *(նույն լիցենզիայի անբաժանելի մաս հանդիսացող համապատասխան ոլորտի աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց)*	
1.	բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր
2.	բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր
3.	բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր
4.	կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր

Միևնույն ժամանակ, հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանվել է պայմանագրի կատարման համար համապատասխան որակավորում ունեցող առնվազն 9 աշխատակիցների պահանջ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լյուսաշ» և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2019թ. նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ Կոնսորցիումի հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1) Հավելված N 1-ի 2-րդ կետում նշված չէ Արմեն Գրիգորյանի հայրանունը, իսկ 3-րդ կետում նշված է, որ պայմանագրի կատարումն իրականացվելու է թվով 8 աշխատակիցների միջոցով՝ հրավերով պահանջվող նվազագույնը 9 աշխատակիցների փոխարեն,

2) Բացակայում են հրավերով պահանջվող Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) լիցենզիայի հետևյալ ներդիրները.

- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր.

- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր.

- կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր:

Կոնսորցիումը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Կոնսորցիումի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկում, սահմանված ժամկետում փաստաթղթեր չեն ներկայացվել:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ «Լյուսաշ» և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊ ընկերությունները թույլ են տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում և առկա են ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Կոնսորցիումը սահմանված ժամկետում չի ներկայացրել

հրավերով նախատեսված փաստաթղթերը, մասնավորապես՝ հրավերով պահանջվող լիցենզիայի համապատասխան ներդիրները, ինչպես նաև Հավելված 1 գնանշման հարցմանը մասնակցելու դիմումի շտկված տարբերակը՝ մասնավորապես աշխատակիցների թվի մասով: Ինչ վերաբերում է Հավելված N 1-ի 2-րդ կետում Արմեն Գրիգորյանի հայրանունը նշված չլինելու վերաբերյալ անհամապատասխանությանը, ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույն աղյուսակում ներկայացվել է իրական շահառուի անձնագրի տեսակը և համարը, որոնք թույլ են տալիս նույնականացնել տվյալ անձին, գտնում եմ, որ սույն վրիպակը չի համարվում էական:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.09.2019թ. թիվ 26/26-1/14672-2019 գրությամբ «Լյուսաշ» և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Լյուսաշ» և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊ ընկերություններին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**